Միւս կողմից միաբանութեան առաջնորդները անդադար դիմում էին խնդրագրով քաղաքական իշխանութեանը, որ իրաւունք տրուի իրանց կազմել առանձին Լութերական Աւետարանական հասարակութիւն։

111 և 116. «Երբ, որ գէնէրալ Սուվէրը — Ինտենդանտ Կարլ Բլոմը Մոսկուայի Աւետարանական — Լուտերական կոնսիստորիայի գլխաւորը եկաւ Շամախի և վերջացրեց նորադարձներին լութերական եկեղեցու ծոցն ընդունելու արարողութիւնը, այնուհետեւ սկսաւ նոցա երեխաներին մկրտել, որոնք չորս տարուց ի վեր մնացել էին անկնունք. նոյնպէս և նշանուածներին պսակել։ Այս պսակների առթիւ փոքր ինչ դժուարութիւն ծագեց. որովհետեւ չորսը շատ մերձաւոր ազգականներ էին (հօրեղբօր և մօրաքրոջ որդիք), որը չափազանը խորթ էր թւում նոյն իսկ մոլեռանդ նորահաւատներին։ Սրանց համար Սարգիս վարպետը արդէն զգուշացրել էր Կարլ — Բլոմին Պետիգօրսկում, ուր աքսորուած էր վարպետը, այն տեղից անցնելու ժամանակ։ . . . Սակայն Կարլ Բլոմը հարկադրուեցաւ Թառայեանցների պահանջները կատարել, որոց տանիցն էին նշանուածներն՝ որք էին Գէորգ, Փերոբ և Զհանգիր Թառայեանցներն առան իրանց հօրեղբարց աղջիկներն. իսկ Աւագ Անտոնեանցն առաւ մօրաքրոջ աղջկան, որ դարձեալ Թառայեանց տանիցն էր[1])»։

117. Այս դէպքը արդարեւ շատ խօսակցութեան և գայթակղութեան առիթ տուաւ։ Բողոքականք իրանք եւս ամաչում էին այս մասին խօսելուս։ Զարմանում էին և զայրանում, թէ ինչպէս կարելի է հօրեղբօր և մօրաքրոջ աղջիկը առնել՝ թուրքի պէս[2]։)

. . . Նշանուած երիտասարդներ այլեւս կային վեց հատ,

---

[1]) Հէնց այս էր սկզբնապատճառը քանի քանի չամախեցւոց կրօնափոխութեան։

[2]) Այս պատմութիւնից երեւում է, որ Շամախու բողոքականները կրօնափոխ են եղել իրենց անձնական հաշիւների համար. զոր օրինակ՝ չհաս պսակները հասցնելու, ուրիշի ոսկիը կողոպտելու, քահանայից և եկեղեցւոյն